

ծագողն մատում նախկին ոչ-աղատ (ճորտային) աղղարնակութիւնը փոխւեց ալժմեան մանր կաւածատէրերի և օրալարձ բանւորներին: Այդ փոփոխութեան ակնկալունի պատճառները օրէնսդրութեան մէջ պէտք է որոնել, որի նպատակն էր զիւղական աղղարնակութեան ճորտութիւնից աղատելը: Պետական այդ օրէնքների մասին հեղինակը տալիս է շատ ճիշդ և հիմնաւոր հաշիւ: Եւ իւր այդ աւարկան հեղինակը երկու ձեռով է ուսումնասիրում: Ամենազխաւոր բուպէներին և ֆաղիսների համար՝ նա զիմում է մի տեսակ զիւլումատիական պատմագրութեան, որի համար

ամենակարեւոր դիւանական թղթերը բառ առ բառ առաջ է բերում: Պրան է նւիրած զրքի երկրորդ մասը: Առաջին մասը նւիրած է բուն լուսաբանութեան, Աղտուղ նա մանրամասնօրէն խօսում է հին հանգամանքների մասին և թէ ի՞նչպէս սոքա փոխւեցին և ի՞նչ դրութեան մէջ է ալժամ այդ զիւղական բանւոր դասակարգը: Նա շօշափում է անգամ խնդիրներ, որոնց լուծելը միայն ապագային է վիճակւած: Բնաորոշ է հեղինակի սառը պատմական եղանակը, որով նա խօսում է ամենաաւրող խնդիրների մասին:

Ա.

ՁԻՏՏԱՐԻ, ՅՈՎՍԷՓ, ՈՒՍԻԱԾՔԵՆԵՐ ԵՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. 3 հատոր, Համբուրգ, 1889 թ., տպ. Ֆոս, իւրաքանչիւրը 8 մարկ. (Sittard, Jos, Studien und Kritiken):

Այս խորագրով լատանի երաժշտական գրող Ջիտտարդը հրատարակել է լուսածների մի շարք, որոնք արժանի են երաժշտագետների ուշադրութեան:

Առաջին հատորում, որը խորագրած է՝ «Խառն թերթեր» (Bunte Blaetter), զետեղւած են բաւականին լուսածների աւելի ընդհանուր և պատմական բովանդակութիւնով, որոնց մէջ աւելի աչքի են ընկնում «Բաւլէութեան նամակներ» և մի քանի նաղատութիւն վիէննայի լատանի կրիտիկոս էդ. Հանսլիկի գրքի՝ կոնցերտների և կոմպոզիտորների մասին: Ընդունելով իսկ նորա ծառայութիւն-

ները, հեղինակը նորան մեղադրում է աչառութեան և միակողմանիութեան մէջ: Կարդալու արժանի է նաև «Պարի պատմութիւնը Գերմանիաում»:

Երկրորդ հատորը՝ «Արեւտադէտներ ընտրողումներ» — կոնցերտի դանլից (Künstler—Charakteristiken. Aus dem Concertsaal) տալիս է նախ մի շարք լուսածների ներկայիս արեւտադէտների մասին, որոնցից նոքա, որոնք վերաբերում են Վագների և Լիստին, Ֆոն Բիւլօւին և Յոլհաննէս Բրահմսին՝ ընդհանուր հետաքրքրութիւն են շարժում: Հեղինակը այդ երաժիշտների զիմաց միանգա-

մայն անաչառ է. նա ընդունում է նաև Լիտտի ազնիւ մտադրութիւնը իւր չարաբերութեան մէջ դէպի վազները, որպէս նաև Ռիսարդ վազները մին ծառայութիւնը ներկայիս ինստրումենտացիայի և օպերայի զարգացման համար, առանց քողարկելու նորա անձնական պակասութիւնները: Միւս կողմից հեղինակը մեծ չարդող է Յովհաննէս Բրահմսի և ծալրափղ վազներականներին իրանց թշնամութիւններով լետ է քշում: Քննադատութիւնների մէջ որպէս ամենից աջողած պէտք է չիշատակել Ռուբինշտէյնի սիմֆօնիան A—moll և Բրահմսի E—moll, որպէս նաև ընդարձակ քննադատութիւնը Մաքս Բրուխի «Աքրլէոսի»:

Երրորդ հատորի վերնագիրն է «Հին և նոր օպերաները, երաժշտական չիշատակելի օրեր, աֆօրիզմներ», որի մէջ գտնում ենք քննադատական աւանդներ մի քանի նոր օպերաների: Սոցա թւում «Ալէօպատրայի մի գիշերը» Վիկտօր Մասսէի, «Փշալի վարդիկ» Ֆերդինանդ Լանգերի, «Ալիզը» Մասսենէի, «Մարտին» Կարլ Գօլդմանի և «Օթելլօ» Վերդիի Մասսէի մուշկիպին արժանաւորութիւնները թւում է մեղ արժանաւոր կերպով չը գնահատւած: Գիրքը, որպէս վկայում են հեղինակութիւն վաղելող կրիտիկոսները, մուշկիպին գրականութեան մէջ ամենալաւերից մէկն է և արժանի գովասանքի: Գրքի արտաքինը նույնպէս գովելի է:

ՄՕՆՕ, Գ., ԳՐԱՆՍՍՈՒԹԻԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ: Մեթօդական և ժամանակագրական ցուցակ աղբիւրների և աշխատութիւնների՝ վերաբերեալ Ֆրանսիայի պատմութեան սկզբնաւորութիւնից մինչ 1789 թւականը:—Monod, G., Bibliographie de l'histoire de France. Cathalogue methodique et chronologique des sources et des ouvrages relatifs à l'histoire de France depuis les origines jusqu'en 1789. Paris, Hachette et C-ie (XI+420 էրես):

Հեղինակը այս գրախօսութիւնով ուղում է ծառայել մասնաւորապէս մանկավարժական և գործնական նըպատակի: Նա ուղում է իւր երկրի պատմութեան համար, որը դժբանքից գրեթէ բոլորովին զուրկ էր, ալն առնել, ինչ արեւ ևն գերմանական պատմութեան համար Գալմանը

(Dahlmann) և նորա նորից մշակող Վալցը (Waitz) իրանց «Աղբիւրներ Գերմանական պատմութեան համար» երկերով. ալն է՝ ալդ գիրքը միջոց է տալիս ալդ առաջարկի վերալ աշխատողներին, բալց մանաւանդ ուսանողներին և չարմար և մեթօդական րեպերտօրիւմ, որը թոլ է տա-